ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ (Արևմտյան Բեռլին)

Հայերի ցեղասպանությունը պատմության մեջ միակը չէ. դժվար չէ դրա զուգահեռները գտնել ու համեմատություններ կատարել։ Բայց ինչ վերաբերում է բռնությունների տևողությանն ու չափերին, ապա ոչ մի ժողովուրդ (բացառությամբ հրեաների) հայերի պես չի տառապել։ Անպատիժ մնացած և միջազգային հանրության կողմից երբևիցե լիակատար ու բացահայտ չդատապարտված այդ ցեղասպանությունն այսօր էլ հայերի ճակատագրին դրոշմված է ամենուրեք՝ ապրեն նրանք սփյուռքում, թե իրենց հայրենիքից մնացած տարածքում։ Ցեղասպանության պատճառած քաղաքական, տարածքային, սոցիալական, իրավաբանական կորուստներն իր վրա է կրում այդ ժողովրդի գրեթե ամեն մի ներկայացուցիչ։ Ափսոսանքի խոսք անգամ չհնչեց թուրքական պետության կամ նրա որևէ կառավարության կողմից (բացառությամբ Դամադ Ֆերիթի թույլ կառավարության՝ երիտթուրքերի անձնատվության և Մուստաֆա Քեմալի կողմից իշխանության զավթման միջև ընկած ժամանակաշրջանում)[1], համապատասխանաբար ամենևին փորձ չարվեց բարոյական կամ նյութական հատուցման, այլ ընդհակառակը՝ ոճրագործության հենց սկզբից տեղի ունեցավ իրողության բացարձակ խեղաթյուրում, «Օսվենցիմյան խաբեության» թուրքական մի տարբերակ, որի հետևանքով զոհ ժողովուրդն ինքն է մեղավոր ճանաչվում։ Թուրքական քաղաքական և պատմական հրապարակախոսությունը հայերի վրա է բարդում մինչև երկու միլիոն (sic!) մուսուլմանների սպանությունը, թուրքական մամուլը նպաստում է երկրում հակահայկական միտումների պահպանմանը, պարբերաբար տեղեկություններ հրապարակելով հայերի բռնությանը զոհ դարձած թուրքերի զանգվածային թաղումները Էրզրումի տարածքում և այլուր հայտնաբերելու մասին։

Ինչ վերաբերում է Գերմանիային, ապա նրա մեղքն ամենից առաջ հայերի նկատմամբ բացարձակ անտարբերության և մասամբ նույնիսկ հայ ժողովրդի հանդեպ բացահայտ նախապաշարմունքի մեջ է, հակառակ թուրքերի կողմից հայերի հալածանքի չափերի ու նպատակի հանգամանալի իմացության։

Հայաստանը, հետևաբար, Հայկական հարցը և հայ ժողովուրդը Գերմանիայի պաշտոնական արտաքին քաղաքականության մեջ, ինչպես նաև գերմանական քաղաքական հրապարակախոսության մեջ մինչև 1914 թ. «Արևելյան հարցում» երկրորդական գործոնի դեր էր կատարում։ 1890 թ. մինչև 1918 թ. «Արևելյան հարցը», անշուշտ, կարևոր նշանակություն է ունեցել Գերմանիայի համար։ Նա հույս ուներ, որ եթե նույնիսկ չկարողանա անմիջականորեն գաղութային քաղաքականություն վարել, ինչպես իր ավելի ուժեղ ու հաջողակ հարևանները՝ Անգլիան ու Ֆրանսիան, ապա համաշխարհային քաղաքական կշիռ ձեռք կբերի անուղղակի ճանապարհով՝ «Բոսֆորի հիվանդին» ապաքինելու և նրա հետ դաշինքի միջոցով։ Հրաժարվելով վերաբնակեցման ուղղակի քաղաքականությունից (սկսած 1900 թ.), Գերմանիան

---

[1] *Իթթիհադի ղեկավարների դեմ ռազմական դատարանում հարուցված գործի, դատավարության ընթացքի և ձախողման մասին (1918 դեկտեմբեր—31. I. 1921) տե՛ս* Dadrian V. N.: Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications. The Yale Journal of International Law. Vol. 14. № 2, Summer. 1989, p. 291—315.

ձգտում էր բացեիբաց ստիպել Թուրքերին՝ իրեն ճանաչելու իբրև հավատարիմ ու լոյալ բարեկամ, դաշնակից և, 1913 թ. սկսած, նաև որպես «զինակից», այն էլ հետադիմական Աբդուլ Համիդի վարչակարգին, ճիշտ այնպես, ինչպես 1908 թ. հուլիսից սկսած «հեղափոխական» (այսպիսին էր այն ժամանակ համաեվրոպական կարծիքը) երիտԹուրքերին։ Ընդ որում, Գերմանիան մշտապես շեշտել է, որ ի տարբերություն Ֆրանսիայի, Անգլիայի կամ Ռուսաստանի՝ մայրցամաքային գերիշխանությունն Օսմանյան կայսրության համար ոչ թե Թուլացում, այլ, ընդհակառակը, ամրացում կնշանակի։ Թուրքիան Փոքր Ասիայում և Գերմանիան Կենտրոնական Եվրոպայում իրար հետ միասին ավստրո-հունգարական միապետության պես մեկ կորիզ պետք է կազմեին։

Այս Արևելյան քաղաքականության սկզբունքային նշանակության վերաբերյալ Գերմանիայի հասարակայնության մեջ առաջին համաշխարհային պատերազմից առաջ նկատելի հակասություններ չկային։ Ընդ որում, հասարակական կարծիքը Գերմանիայում տարբերակներ համարյա չի ունեցել (ի տարբերություն բրիտանական ավելի հին ու զարգացած դեմոկրատական-քննադատական ավանդույթներ ունեցող հասարակական կարծիքի)։ Գերմանական կուսակցությունները, ներառյալ սոցիալ-դեմոկրատականը, նույնպես չունեին ինքնուրույն արտաքին-քաղաքական կոնցեպցիա։ Ընդհակառակը՝ բոլոր կուսակցություններին ու ֆրակցիաներին միավորում էր արևելյան քաղաքական երազանքը։ Գերմանացի պատմաբան Վան Կամպեն 1963 թ. իր դիսերտացիոն աշխատանքում գրել է, որ այդ երազանքը ոչ այնքան զգալի արտաքին տնտեսական ջահեր ձեռք բերելու (իրականում դրանք չնչին էին), որքան ներքին քաղաքական նպատակադրման մեջ էին՝ «համաշխարհային տերության» ստեղծման և բաժանված ազգի «ընդհանուր շահախնդրությունը արտահայտելու և այն նորից վերամիավորելու» էքսպանսիայի միջոցով[2]։

Հայերը 1878 թ. սկսած պահանջում էին Բեռլինի կոնգրեսում իրենց պայմանագրով խոստացած «բարեփոխումներին» և արտոնությունների իրագործում, դրանով իսկ հանդես դալով արպես «անդորրությունը խանգարող» անապահովության տարր՝ Թուրքական պետության ուժեղացմանը ձգտող գերմանական արտաքին քաղաքականության համար։

«Հնչակ» և «Դաշնակցություն» կուսակցությունների հեղափոխական կոմիտեները վտանգավոր գործիք էին համարվում Գերմանիայի ամենաուժեղ արտաքին-քաղաքական մրցակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի ձեռքին։ Այդ համոզմունքին էին նաև այնպիսի հայասերներ, ինչպիսիք էին դոկտոր Յոհաննես Լեփսիուսն ու դոկտոր Պաուլ Ռոհրբախը։ Նրանք անվերապահորեն կիսում էին գերմանական արևելյան էքսպանսիայի տնտեսական և մշակութային անհրաժեշտության վերաբերյալ համընդհանուր կարծիքը։ Պ. Ռոհրբրբախը նույնիսկ Բաղդադի երկաթուղու կառուցման և գերմանական «կուլտուրիմպերիալիզմի» ամենաեռանդուն ջատագովներից էր։ Հավանաբար իր բարեկամ հրապարակախոս, վարձկան Թուրքասեր Էռնստ Յեքի աղդեցությամբ 1912 թ. Ռոհրբախը սկսել է երիտԹուրքերին դիտարկել որպես «կարգավորող ու պետությունը պահպանող ուժ», շարունակելով առաջվա պես դրականորեն գնահատել Թուրք ժողովրդին, քանի որ թե՛ եվրոպական Թուրքիայի և թե Անատոլիայի Թուրքերը «հիմնականում արիացիներ են» (համեմատի՛ր „Der deutsche Gedanke in der Welt"): Ռոհրբախ-Յեք ընկերությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, հայասերների ու Թուրքասերների հստակ բաժանում գերմանացիների միջավայրում գոյություն չի ունեցել. դրանք, ըստ էության, միևնույն ոլորտներում հանդես եկող գործիչներ էին։

---

[2] Arndt. Hahhah: Elemente und Ursprünge totaler Herrschaft. Frankfurt/Main, 1958, S. 619: Kampen, Wilhelm van: Studien zur deutschen Türkeipolitik in der Zeit Wilhelms II. Diss., Kiel, 1968, S. 319.

Ինչևիցե, բոլոր «հայասերները» հայտարարում էին, որ հայերը թուրքերի համեմատությամբ ավելի արժանի և գերմանական արևելյան քաղաքականության համար չափազանց օգտակար «կուլտուրական տարր» են։ Թեկուզ այս հանգամանքը պարզաբանում է, թե որքան համատարած էր այն ժամանակ գերմանական շահամոլությունը, որից ելնելով էին գնահատվում ամբողջ ժողովուրդներ՝ թե քաղաքական հրապարակախոսության և թե հասարակական կարծիքի ասպարեզում։ Առնվազն երկու տասնամյակ առաջ կազմավորված նախապաշարմունքները, այնուհետև՝ 1915 թ., ճակատագրական ազդեցություն ունեցան. առանց տատանվելու, հանուն Արևելքում իր կարծեցյալ անկապտելի ազգային շահերի և թուրքերի հետ դաշինքի, Գերմանիան զոհաբերեց հայերի հանդեպ ունեցած համակրանքը։

Ոչ բազմաթիվ բանավոր ու գրավոր բողոքներ ուղղված թուրք կառավարությանը, մնացին առանց հետևանքի, քանի որ վերաբերում էին ոչ թե բռնագաղթին, այլ միայն դրա իրագործման չափազանց դաժան միջոցներին։ Դեռ ավելին՝ գերմանական դեսպան Վանգենհայմը և արտաքին գործոց նախարարությունը բոլորովին անքննադատ ընդունեցին թուրքական պաշտպանական պնդումը, որի համաձայն, Օսմանյան կայսրության անվտանգությանը իբր սպառնում է հսկայական հայկական ապստամբությունը։ Համապատասխանաբար՝ Ռուսաստանն ու Անգլիան բարոյապես պատասխանատվություն պիտի կրեին հետևանքների համար, որովհետև, իբր նրանք էին հայերին հրահրում ապստամբության։ Ստի այդ քաոսը, հանցանքներն ուրիշների վրա բարդելը կամ իրենից վանելը ավելի է ծանրացնում Գերմանիայի մեղքը, մանավանդ որ գերմանացի դիվանագետները մնացած եվրոպացիներից ավելի լավ ու լիակատար էին տեղյակ հայերի ոչնչացման՝ թուրքերի մտադրությանը։ Նույնիսկ Վանգենհայմը 1915 թ. հուլիսի սկզբից այլևս չէր կարող չնկատելու տալ այն իրողությունը, որ ռազմաճակատից հեռու գտնվող շրջաններում կատարվող բռնագաղթը հնարավոր չէր բացատրել զուտ պատերազմով պայմանավորված ապստամբած հայ բնակչության վերաբնակեցմամբ. «Այս հանգամանքը և վերաբնակեցումը կատարելու եղանակները ցույց են տալիս, որ կառավարությունը փաստորեն նպատակ է հետապնդում թուրքական կայսրությունում վերացնելու հայկական ռասան»[3]։

Այնուամենայնիվ, երկրի կառավարությունն ու արտաքին գործոց նախարարությունը ոչ միայն ոչինչ չնախաձեռնելով դիտում էին, թե ինչպես է ընթանում հայերի ամբողջական ոչնչացման թուրքական ծրագիրը (կոտորած, բռնագաղթ, մնացած բնակչության բռնի մահմեդականացում), այլև գրաքննությանն ու մամուլին ցուցումներ տալու միջոցով հոգ էին տանում, որպեսզի գերմանական ժողովուրդը ոչինչ չիմանա թուրք դաշնակիցների կողմից դավանակից հայերի բնաջնջման մասին։

Գերմանական լրագրային հրատարակչության նախագահ դոկտոր Ֆարբերի հարցմանը, թե ինչպես պիտի մամուլը ներկայացնի Գերմանիայի արտաքին գործոց նախարարության վերաբերմունքը հայերի ոչնչացման հանդեպ, պետական քարտուղար Ա. Ցիմերմանը որպես արտաքին գործոց նախարարության խոսնակ 1915 թ. հոկտեմբերի 4-ին, իմիջիայլոց, գրավոր պատասխանեց. «Որքան էլ ցավալի կարող է լինել քրիստոնյայի տեսակետից այն, որ նաև անմեղ մարդիկ են տուժում թուրքական միջոցառումների ընթացքում, մեզ համար ավելի մոտ են մեր սեփական որդիներն ու եղբայրները, որոնց սրբազան ու արյունահեղ կռվին Ֆրանսիայում և Ռուսաստանում օգնում է թուրքերի ռազմական օժանդակությունը»[4]։

---

[3] Deutschland und Armenien 1914—1918: Sammlung diplomatischer Aktenstücke. Hrsg. und eingeleitet von Johannes Lepsius. Potsdam, 1919 (Neuausgabe Bremen, 1986). S. 94.

[4] Trumpener Ulrich: Germany and the Ottoman Empire 1914—1918. Princeton/New Jersey, 1968, p. 221.

Ըստ Երևույթին, որպես հակազդում Յոհաննես-Լեփսիուսի 5. 10. 1915 թ. հանդիպմանը մամուլի ներկայացուցիչների հետ, արտաքին գործոց նախարարությունը հաջորդ օրը հետևյալ ղեկավար ցուցումն արձակեց գերմանական մամուլում ցեղասպանությունը մեկնաբանելու վերաբերյալ. «Մեր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ չի կարելի ոչ միայն վտանգի ենթարկել այդ ներքին թուրքական վարչական գործի պատճառով, այլև ներկա ծանր պահին նույնիսկ հետաքննել այն։ Այդ պատճառով առայժմ հարկավոր է լռել։ Հետագայում, եթե արտասահմանում անմիջական փորձեր լինեն Գերմանիայի մեղսակցությունն ապացուցելու, ապա անհրաժեշտ կլինի գործը ամենայն զգուշությամբ և զսպվածությամբ քննել ու այնուհետև պնդել, որ հայերն իրենք էին խիստ գրգռել թուրքերին»[5]։

Ավելի ուշ, 23. 12. 1915 թ. տեղի ունեցած արտաքին գործոց նախարարության ասուլիսում հայտարարվեց հետևյալ հրահանգը.

«Հայկական հարցի մասին ավելի լավ է լռել։ Թուրքական իշխանությունների դիրքորոշումը այդ հարցում առանձնապես գովելի չէ»[6]։

Ու. Տրումպեներն այն կարծիքին է, որ 8. Լեփսիուսի հրատարակած վավերագրերի ժողովածուն միտումնավոր է ներկայացնում իրողությունը, աշխատելով ամբողջ մեղքը բարդել Թուրքիայի վրա։

Ու. Տրումպեների կատարած գերմանական դիվանագիտական գրագրության հետազոտումը Գերմանիայի խայտառակ անգործության ավելի հեռու գնացող ապացույցներ է հայտնաբերում. «Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ղեկավարների որոշումը՝ հայերի պատճառով խզման վտանգի չենթարկել Բարձր Դռան հետ հարաբերությունները, անշուշտ, պիտի դիտվի և քննարկվի կոնտեքստի մեջ։ Կոտորածները տեղի են ունեցել պատերազմի ժամանակ... Նոր դարի պատմությունը օրինակներ չգիտի, որ պատերազմող երկիրը մարդասիրական նկատառումներով ստիպված լիներ հրաժարվելու իր դաշնակցին օգնելուց՝ նրա ներքին-քաղաքական զանգվածային գործողությունների պատճառով»[7]։

Տրումպեների փորձը՝ Գերմանիան արդարացնելու 1961 թ. Ֆրիտից Ֆիշերի այն կշտամբանքից, որ նրա՝ «դեպի համաշխարհային իշխանություն խոյանքն» է առաջին համաշխարհային պատերազմի պատճառ դարձել, թերևս, ուներ պատվախնդրական մղումներ. ցեղասպանության խնդրի նկատմամբ նրա մեղմ դատավճիռը արդարացի չէր, և հօգուտ՝ օտարերկրյա միջամտությունների չգոյության վկայակոչումը անընդունելի է, քանի որ հենց երիտթուրքերի ոճիրը հայերի դեմ ոչ մի նախադեպ կամ զուգահեռ՝ այդպիսի դաշնակցային հարաբերությունների պայմաններում, չի ունեցել։ Ես լրիվ միանում եմ շվեյցարացի պատմաբան Վ. Ցյուրերին, որը եզրակացրել է. «Գերմանիայի մեղքը Թուրքիայում հայ ժողովրդի կործանման գործում ոչ այնքան ակտիվ մասնակցության մեջ է (ինչպես ցանկանում էր ներկայացնել պատերազմի ժամանակ դաշնակիցների պրոպագանդը), որքան թուրքերի կատարած կոտորածները հանդուրժելու։ Այն, որ Բեռլինը հայ քրիստոնյաներին և մարդկայնության պահանջներն անխղճորեն զոհաբերել է հանուն երիտթուրքերի հետ ունեցած դաշինքի, կազմում են սարսափելի պատկերներով հարուստ համաշխարհային պատերազմի ամենամռայլ էջերը։

---

[5] Տե՛ս Vierbücher Heinrich: Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat: Armenien 1915. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken. Hamburg—Bergedorf, 1930 (Reprint: Bremen, 1985), S. 78: Համեմատե՛ք Fischer Heinz-Dietrich: Pressekonzentration und Zensurpraxis im Ersten Weltkrieg. Berlin, 1973, S. 199, 266: Mühsam Kurt: Wie wir belogen wurden: Die amtliche Irreführung des deutschen Volkes. München, o. J. (1918), S. 76, 79: Marquart Joseph: Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Berlin-Schöneberg (1919), S. 48.

[6] Vierbücher, a. a. O., S. 78.

[7] Trumpener, a. a. O., S. 269.

իր լուությամբ գերմանական քաղաքականությունը դարձավ նույնքան մեղավոր, որքան այն դեպքում, եթե մասնակցեր հայերին հալածելուն»[8]։

Որպես Թուրքիայի դաշնակից, Գերմանիան մեծ տնտեսական, քաղաքական և ռազմական ազդեցություն ուներ Օսմանյան կայսրությունում։ Գերմանացի մարշալ Օտտո Լիման ֆոն Սանդերսի օրինակի վրա տեսնում ենք, որ եթե ռազմական ճնշումն ավելի վճռական լիներ, հայ բնակչության համար միանգամայն փրկարար նշանակություն կունենար[9]։

Վրաստանի հետ 1918 թ. կնքած պաշտպանողական պայմանագրի ոգեսմի պայմանագիր էականում կօգներ Հայկական հանրապետությանը։

Արտասահմանից հայերին օգնելու նպատակով միջամտությունների խնդիրը քննարկվում է սկսած 1878 թ. Բեռլինի կոնգրեսից։ Գերմանացի ողջամիտ քաղաքագետ ռայխսկանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը նույնքան կասկածած էր տածում եվրոպական միջամտությունների նշանակության վերաբերյալ, որքան և, հետադարձ հայացք գցելով 1894—1918 թթ. իրադարձությունների վրա, հայերի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը[10]։

Թերահավատների ղուցակը շարունակվում է մինչև հայ գիտնական պրոֆ. Վ. Դադրյանը (Նյու-Յորք)[11]։ Առարկություններն, իհարկե, ուղղված չեն սկզբունքորեն արտաքին միջամտությունների դեմ, այլ ընդհակառակը՝ դատապարտում են Բեռլինի պայմանագիրն ստորագրած պետությունների երկպառակությունն ու անվճռականությունը։ Մինչդեռ, հայկական ռեֆորմները թողնելով կիսատ, այն ժամանակ տերություններին հաջողվեց միայն չարացնել առանց այդ էլ խելացնոր սուլթան Աբդուլ Համիդին։ Ասածն, այսպիսով, չի հերքում սկզբունքային միջամտությունների օգտակարությունը, այլ թերևս այնպիսիների, որոնք, անտեսելով շարժառիթը, այլ նպատակների են ծառայում։

Բացի դրանից, ինչպես ցույց է տալիս մինչև 1913 թ. ձգձգված «հայկական բարեփոխումներին» և այնուհետև ցեղասպանության օրինակը, ար-

---

8 Zürrer Werner: Kaukasien 1918—1921: Der Kampf der Großmachte um die Landbrücke zwischen Schwarzem und Kaspischem Meer. Düsseldorf (1978). S. 146

9 Քանի որ հայերի տարագրման սկիզբը Զմյուռնիայում 8.. 11.. 1915 թ.. չափազանց մեծ հուզում առաջացրեց տեղի հույն բազմաթիվ բնակչության մեջ, այդ ժամանակ քաղաքում գտնվող մարշալ Լիման ֆոն Սանդերսը վճռեց բողոքով հանդես գալ դեմ։ Երբ աքսորվեցին առաջին 300 հայերը, նա զգուշացրեց վալիին, որ կրկնվելու դեպքում զենքի ուժ կգործադրի (համեմատիր Deutschland und Armenien, a. a. O., S. 300 ff)։ Իր հուշերում 1919 թ. Լիման ֆոն Սանդերսը, անշուշտ, նվազեցրել է գերմանական զինվորականների ազդեցության հնարավորությունները Թուրքիայում, որպեսզի նրանց ազատի հայերի ոչնչացմանը մեղսակից լինելու կշտամբանքից։ Բայց և այնպես, Լիման ֆոն Սանդերսը չէր կասկածում, որ հայերն իրենք են հրահրել իրենց դեմ ուղղված հալածանքները, քանի որ «հաճախ էին շփվում ներս թափանցող ռուսների հետ», ու այդ իսկ պատճառով, որոշ չափով հասկանում է թուրքերին (տե՛ս Liman von Sanders, Otto: Fünf Jahre in der Türkei, Berlin, (1920), S. 200 ff):

10 Բիսմարկն արհամարհանքով է արտահայտվել այն շանքերի մասին, որ 1879 թ. Բեռլինի կոնգրեսից հետո անգլիացիները գործադրում էին հայերի օգտին բարեփոխումների համար։ Նա գրել է Լոնդոնում գերմանական դեսպանին. «Այսպես կոչված հայկական ռեֆորմներն իդեալական և տեսական ձգտումներ են, որոնք պատշաճ տեղ են գրավում կոնգրեսի բանակցությունների՝ հանուն պաղեստինական արժեքավորման օրենսմենտալ մասում։ Դրանց գործնական նշանակությունը... շատ կասկածելի արժեք ունի, իսկ հայերի համար՝ երկսայրի»։ (Zürren Werner: Die Nahospolitik Frankreichs und Rußlands 1891—1898. Wiesbaden, (1970). S. 94). Ֆ. Նանսենն իր գիրքը (Betrogenes Volk: Eine Studienreise durch Georgien und Armenien als Oberkommissar des Völkerbundes. Leipzig, 1928) ավարտում է հետևյալ բառերով. «Վայ հա՛յ ժողովրդին, որ նա խճճվել է եվրոպական քաղաքականության մեջ։ Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը ոչ մի եվրոպացի դիվանագետի բերանից երբեք չհնչեր» (նույն տեղում, էջ 334)։

11 Dadrian, V. N. Genocide as a Problem ..., p. 228.

տաքին միջամտությունները երևակայական «հովանավորյալների» համար մանավանդ ճակատագրական են դառնում այն դեպքում, եթե այդ միջամտություններն իրականացնող պետությունները (շահագրգռված կողմերը) բավականաչափ ուժեղ կամ պատրաստակամ չեն, որպեսզի ամենայն վճռականությամբ արագացնեն իրենց պահանջների կատարումը։

Հայերը, այսպիսով, դարձան Անտանտայի երկրների «հինգերորդ շարասյունը» և եվրոպական միջամտությունների փորձերի ձանձրացնող շարժառիթ, որը երիտթուրքերը փորձեցին թոթափել առաջին իսկ հնարավորությունից օգտվելով։

Հայերի ցեղասպանությունը սկիզբ է առել առաջինը՝ թուրքական ազգայնամոլությունից և ռասիստական այն համոզմունքից, որ անհրաժեշտ է օսմանյան բազմազգ կայսրությունը դարձնել «Թուրքիա թուրքերի համար»։ Երկրորդը՝ այս ոճրագործությանը, անշուշտ, նպաստեց հատկապես պատերազմի ժամանակ միջազգային համերաշխության բացակայությունը։ Պատերազմի մասնակից պետություններից ոչ մեկի համար 1914—1923 թթ. ժամանակահատվածում հայերը և հայերի գոյության իրավունքը ավելի կարևոր չեն եղել, քան սեփական շահերի հետապնդումը։ Այս հանգամանքը և երիտթուրքերի՝ ցեղասպանություն գործելու վճռականությունը հասցրին մեկ և կես միլիոն հայերի կործանմանը[12] և պատմական Հայաստանի տարածքի 9/10-ի կորստին։

Հայերի ցեղասպանությունը դարձավ պետական հանցագործության մի նոր ձև, իսկ նրա մանրամասները բազմաթիվ զուգահեռներով հանդես եկան նացիոնալ-սոցիալիստների ինդուստրիալ ցեղասպանության ոճրագործություններում։ Դրանք են՝ «ոչնչացում աշխատանքի միջոցով» (հայերից կազմած հարկադիր աշխատանքի ջոկատներ ճանապարհների շինարարություններում և օսմանյան բանակում, հարկադիր աշխատանք գերմանական համակենտրոնացման ճամբարներում), զանգվածային ոչնչացում ժամանակակից փոխադրամիջոցների (օրինակ, երկաթուղային) օգնությամբ[13]; բժշկական փորձեր զոհերի վրա[14], ինչպես նաև զոհերի գազաթունավորում[15]։ Զուգահեռներ կան նաև հանցագործների մտածելակերպի մեջ. և՛ երիտթուրքերը, և՛ նացիստները սեփական ժողովուրդը ներկայացրել են որպես մարմին, որի վրա ազգային փոքրամասնությունը հիվանդության հարուցչի պես է ազդում։ «Գոյության ոչ արժանի կյանքի», կամ «թերարժեք ռասայի»[16] վերացումը յուրաքանչյուր ցեղասպանության գաղափարախոսության լեզվագաղափարական ակունքն է։

---

12 Թուրքերի բռնության ակտերից և դրանց հետևանքով (սով, համաճարակներ, անօթևան կյանք) զոհված հայերի ընդհանուր թիվը 1878—1922 թթ. անցնում է 2 միլիոնից։

13 Հայ գաղթականների մեծամասնությունը ստիպված եղավ ոտքով անցնել իր մահվան ճանապարհը։ 1915 թ. վերջերին տարագրյալներին Հյուսիսային Սիրիա տեղափոխելու համար սկսեցին օգտագործել նաև անասնավագոններ։ Փոխադրության անմարդկային պայմանների մասին ի թիվս այլոց տեղեկացնում է Էռնստ Քրիստոֆֆելը (Christoffel Ernst J, Ausdunklen Tiefen: Erlebnisse eines deutschen Missionärs in Türkisch-Kurdistan während der Kriegsjahre 1916—1918. Berlin-Friedenau, 1971. S. 10).

14 Հայերի վրա բժշկական գիտափորձերը նկարագրել է թուրք ախտաբան պրոֆ. Համդի Սու

Ցեղասպանությունը պատմականորեն մեկուսացած երևույթ չէ, նկատի առնելով ոչ միայն հայերին, որոնք ներկայումս է՛լ ավելի, քան երբևէ, տառապում են, այլև առհասարակ միջազգային համագործակցության մեջ։ Այս պատճառով ցեղասպանության ոճրի վերաբերյալ ցանկացած հետազոտություն չի կարող ունենալ միմիայն ակադեմիական բնույթ։ Այն պիտի նպաստի ցեղասպանության առաջացման սկզբնապատճառների վերլուծությանը, որպեսզի, վերջին հաշվով, հնարավոր դառնա դրա կանխումը։ Ցեղասպանության յուրաքանչյուր պատմական ուսումնասիրության անհրաժեշտ լրացումը՝ մարդու իրավունքներին վերաբերող աշխատանքն է, կենդանի մնացած զոհերին և նրանց ժառանգներին հետագա հետապնդումներից պաշտպանելը և նրանց օրինական՝ կոլեկտիվ ու անհատական իրավունքները ապահովելը։

Պատմականորեն ձևավորված քաղաքական միտումները հանախ դարմանալի կենսունակություն են ցուցաբերում։ Դա էր հանդես գալիս Թուրքիայի նկատմամբ գերմանական քաղաքականության և սրանից բխող Հայաստանին ու հայերին վերաբերող ամեն ինչի անգիտության (հետևապես և Փոքր Ասիայի մյուս ոչ թուրք ազգային խմբերի իրավունքներն անտեսելու) մեջ։ ԳՖՀ-ն Հյուսիս-Ատլանտյան դաշինքի միջոցով նորից դարձավ Թուրքիայի զինակիցը։ ԳՖՀ-ում ապրում են 1,4 միլիոն թուրք քաղաքացիներ (մոտավորապես 15000 հայերի դիմաց)։ Այս պատճառով էլ պատահականություն չէ, որ հին ավանդույթները վերածնվում են։ Այսպես, Թուրքիայից հայ փախստականները ԳՖՀ-ում ոչ մի օրինական ապաստան չեն գտնում։ Կամ՝ 1985 թ. սենատոր Ֆրանկեն (գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) արտաքին գործոց նախարարության հրահանգի և Թուրքիայի արտաքին գործոց նախարարության ցանկության համաձայն փորձեց արգելել "Genozid und Holocaust" հուշամիջոցառումը։ Հրամայվել էր արգելանք դնել այն վավերագրերի (կամ դրանց թարգմանությունների) մեծամասնության վրա, որոնք ապացուցում են՝ հայերի դեմ թուրքական մամուլում կազմակերպած հալածանքները։ Դա տեղի ունեցավ համարյա 70 տարի անց այն բանից հետո, երբ Գերմանիայի գրաքննական մարմինները բռնագրավեցին Յ. Լեփսիուսի «Գաղտնի զեկուցագիրը», ինչպես նաև դոկտոր Մարտին Նիպագեի «Գերմանական ժողովրդի հրավիրված ներկայացուցիչներին ուղղված խոսքը»։

Գերմանիայում (և անշուշտ եվրոպական մյուս բոլոր երկրներում) դեռևս անցյալ դարում կազմավորվել է արտաքին-քաղաքական վիճակից բխող համակրանք կամ հակակրանք այս կամ այն ժողովրդի նկատմամբ։ Առաջադեմ բուրժուական-հեղափոխական Գերմանիան, օրինակ, Լեհաստանի կողմն էր բռնել, քանի որ վերջինս ինքնակալական Ռուսաստանի հակա-

---

շիրը՝ երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղարի ներկայությամբ. «Եթե նույնիսկ ես բժիշկ լինեի, ես չէի կարողանա անտեսել իմ ազգային պատկանելությունը։ Ես այս աշխարհ եմ եկել որպես թուրք։ Իմ ազգային պատկանելությունը գերակշռում է մնացած ամեն ինչի...։ Հայ դավաճանները բռն են գրել մեր հայրենիքի կրծքին, նրանք վտանգավոր մանրէներ են։ Արդյոք բժշկի պարտքը չէ կործանել այդ մանրէները։ Կամ հայերը կոչնչացնեն թուրքերին ու կազատեն այս երկիրը, կամ թուրքերը կոչնչացնեն հայերին» (Dadrian. V. N., The Role of Turkish Physicians..., p. 175).

Մարդուն արհամարհող այս մտածելակերպը շարունակում է գոյատևել։ 1987 թ. գարնանը Արևմտյան Բեռլինում մասնավոր թուրքական կաբելային հեռուստատեսությունը ATT (Avrupa Trk Tüelevizyonu) հակահայկական կամպանիա սկսեց, որի ժամանակ Օսմանցումաքօղուլլարին՝ AGMT-ի (Եվրոպայում ազգային մտածելակերպի կազմակերպություն) նախագահը, իրեն իմիջիայլոց թույլ տվեց հայերին անարգել որպես «մանրէներ» (հմմտ. Hoffman, Tessa: Einleitung: Zu den politischen Hintergründen einer antiarmenischen Hetzkampagne in Berlin. In: Armenische Frage, türkisch behandelt: Dokumentation über eine antiarmenische Hetzkampagne in Berlin-West sowie über die vom Europa-Parlament verabschiedete Resolution zur armenischen Frage. Bremen, 1988, S. 13—16).

ռակորդն էր (և ընդհակառակը՝ ռուսասիրությունը մոդայիկ էր գերմանացի հետադիմականների շրջաններում)։

Ավելի ուշ՝ XIX դ. վերջերին լիբերալ հասարակայնությունը, որպես կանոն, թուրքերին կողմ էր, իսկ հայերին դեմ, ինչը, իմիջիայլոց, հանդիսանում էր կրոնական անկանխակալության արտահայտություն (հակառակ իսլամը նախատող քրիստոնյա հետադիմականներին) և բխում էր արևելյան քրիստոնյաների (որոնք չափազանց հետամնաց էին համարվում) հանդեպ նախապաշարմունքից, ստեղծելով արտասովոր մի խառնաշփոթ։

Առաջին գերմանացին, որը հասկացավ ժողովրդի իրավունքների համար պայքարի իմաստը, սոցիալ-դեմոկրատ (ռևիզիոնիստական ֆրակցիա) Էդուարդ Բեռնշտայնն էր։ 1902 թ. նա, վկայակոչելով 1793 թ. ֆրանսիական Մարդու իրավունքների հռչակագիրը, հիշեցրեց, որ հայերի համար պատասխանատվություն են կրում բոլոր ազգերը. «Ճնշման է ենթարկվում ողջ հասարակությունը, եթե ճնշված է թեկուզ նրա մեկ անդամը»[17]։

Բեռնշտայնի 1902 թ. հանրահայտ «Հայկական ճառը» բարոյական նոր մղումներ տվեց այն ժամանակ հօգուտ հայերի արտահայտվող կարծիքներին։ Հասարակ փոխանակման գաղափարի («իմ օգնությունը միայն այն դեպքում, եթե դու ինձ պետք ես») կամ ավանդական կրոնական համերաշխության («իմ օգնությունը միայն այն դեպքում, եթե իմ և քո հավատը նույնն է») փոխարեն հանդես էր գալիս բոլորովին նոր՝ միջազգային համերաշխության և իրավունքի խախտման սկզբունքային անհանդուրժողականության գաղափարը, եթե անգամ վտանգ չի սպառնում սեփական անձին ու սեփական ժողովրդին։ Սա է այն դիրքորոշումը, որն ի վերջո անվերապահորեն բերում է ինքնորոշման սկզբունքների հաստատմանը և գործադրվում է մարդկային հասարակության գոյության սկզբունքային իրավունքի համար՝ սկսած բնական ու նախնադարյան հասարակությունից մինչև արդյունաբերական հասարակություն։ Ավելին՝ սա մի դիրքորոշում է, որը ենթադրում է քաղաքակրթության բավական բարձր աստիճան։ Նախկին համերաշխ ընկերակցությունները հենվել են քաղաքական շահերի, հավատի, մշակույթի, լեզվի ընդհանրության վրա։ Երբեմնի սահմանների բացումը, միջազգային հաղորդակցությունը պահանջում են միմյանց հետ շփման ավելի լայն կարդավորումներ։ Մարդու իրավունքների էթիկան հիմնվում է արդարության բարձր զարգացած զգացմունքի վրա, նույնիսկ եթե դա վերաբերի մշակութորեն, աշխարհագրորեն, քաղաքականորեն, գաղափարապես կամ հավատով մեզ համար օտար մարդկանց նկատմամբ անարդարությանը։ Այս էթիկան հիմնվում է այն համոզմունքի վրա, որ սեփական գոյությունը անտանելի պետք է թվա, եթե ուրիշ մարդիկ (անհատ) կամ հանրություն զրկված են հիմնական՝ մարդու իրավունքներից։

Մարդու իրավունքների համար պայքարի բարոյական ուժը նրա անկաշառության մեջ է, որովհետև այն ունի միայն մեկ նպատակ՝ արդարության վերականգնում։ Համերաշխությունն այսպես ընկալող մարդկանց թիվը թող որ դանդաղ, բայց աճելու է։

Ինքն իրեն ոչինչ չի արվում։ Դա հատկապես վերաբերում է դժվարաշարժ միջազգային հանձնաժողովներին և նույնիսկ մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպություններին։ Միջազգային մակարդակով հայերի ցեղասպանությունը դատապարտելու նախապայմանը դարձավ այն, որ տուժածներն առաջինը իրենք ձայն բարձրացրեցին։

Հայկական քաղաքական շարժման վերածնունդը կատարվեց 1965 թ.։ Երբ տաս տարի շարունակ խաղաղ բողոքների միջոցով չհաջողվեց հայերի վերաբերյալ միջազգային լռությունը կոտրել, սփյուռքահայ ընդհատակյա կազմակերպությունները, և ամենից առաջ ԱՍԱԼԱ-ն, անցան մարտնչող գործողությունների։

---

[17] Bernstein Ed.; Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas. Berlin, 1902. S. 40.

«Ցավալի է,—ինքնաքննադատորեն ասվում է 1984 թ. լույս տեսած Համաշխարհային եկեղեցական խորհրդի հրապարակման մեջ,—որ համաշխարհային հասարակայնությունը հայ ժողովրդի բացահայտ պահանջների հարցում չկարողացավ կամ չուզեց ուշադրություն դարձնել զոհերի մի ամբողջ սերնդի խաղաղ խնդրանքներին, մինչդեռ այսօր վերջիններս թերահավատությամբ են լսում իրենց զավակների խոսքերը, որոնց մասնակցությունը բռնության և ահաբեկման գործողություններին դարձյալ զոհեր է պահանջում»[18]։

Սակայն մարդու իրավապաշտպան կազմակերպությունների աճող ակտիվությունը (Մեծ Բրիտանիայում՝ Minority Rights Group, դերմանալեզու բոլոր երկրներում՝ Ge ellschaft für bedrohte Völker, Ֆրանսիայում՝ Groupement pour les droits des minorités), որն սկսել է ազգային և միջազգային հասարակական կարծիքի վրա ազդել հօգուտ հայերի, տալիս է առաջին արդյունքները։ 1983 թ. Համաշխարհային եկեղեցական խորհուրդն իր VI համաժողովում բանաձևի միջոցով արտահայտեց իր դիրքորոշումը հայերի ցեղասպանության վերաբերյալ։ 1984 թ. ապրիլին Փարիզում հրավիրվեց հայերին նվիրված ժողովուրդների մշտական դատարանի նիստ[19]։ 1985 թ. օգոստոսի 29-ին խտրականության կանխման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում լսվեց Թուրքիայի կողմից 13 տարի շարունակ խոչընդոտվող զեկուցումը ցեղասպանության կանխման և պատժելու վերաբերյալ, որտեղ հիշատակվում էր նաև թուրքերի 1915 թ. ոճրագործությունը։ 1987 թ. հունիսի 18-ին եվրոպառլամենտն ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ»[20] բանաձևը, որտեղ Թուրքիայի՝ Ընդհանուր շուկայի անդամ դառնալու պայմաններից մեկը 1915 թ. ցեղասպանության մասին ինքնաքննադատորեն արտահայտվելն է։ Հետևյալ նվաճումը 1989 թ. մայիսի 31-ին Համաշխարհային եկեղեցական խորհրդի՝ Սան-Անտոնիոյի (Տեխաս) համաժողովում ընդունված հայկական բանաձևն է, որտեղ իմիջիայլոց ճանաչվում է սփյուռքահայության հայրենիք վերադառնալու իրավունքը։

Անշուշտ, այսօր, երբ հայկական աշխարհը վառվում է չորս անկյունից միաժամանակ, թվում է, թե այդ դժվարությամբ նվաճած լրացուցիչ դիրքերն անհասանելի են։ Մեր աչքերի առաջ կատարվում է ոչ միայն դանդաղ, համաշխարհային հասարակայնության համար աննկատելի հայկական (ինչպես նաև հույն և ուղղափառ սիրիական) համայնքի մնացորդների հոգեվարքը Թուրքիայում, տասնյակ հազարավոր հայերի ելքը Իրանից և Լիբանանից, այլև հայ փոքրամասնության վերսկսված ճնշումն ու հալածանքն Ադրբեջանական ԽՍՀ-ում։ Սումգայիթի ջարդը (1988 թ. փետրվար) և դրան հետևած

---

[18] Armenien: Tragödie ohne Ende. Zusammengestellt von der CCIA in Zusammenarbeit mit dem Internationalen Projekt des Rates der Kirchen im Mittleren Osten (MECC). (Genf): Komission der Kirchen für Internationale Angelegenheiten, Ökumenischer Rat der Kirchen, 1984. S. 8.

[19] Die Expertenberichte und die Stellungnahme! des Tribunals in: Das Verbrechen des Schweigens: Die Verhandlung des türkischen Völkermords an den Armeniern vor dem Ständingen Tribunal der Völker. Vorwort und redaktionelle Bearbeitung von Tessa Hofmann. Göttingen, Wien, (1985).

[20] Տե՛ս որոշման տեքստը (Armenische Frage..., a. a. O., S. 72—75), պառլամենտական բանակցությունների արձանագրությունը ("Amtsblatt der Europäischen Gemainschaft: Verhandlungen des Europäischen Parlaments", Sitzungsperiode 1987—1988, Ausfuhrliche Sitzungsberichte vom 15. bis 19. Juni 1987, Luxemburg, 1987, SS. 266—273, 280—281). Արևմտագերմանական պատգամավորները եվրոպառլամենտում (քրիստոնյա և սոցիալ-դեմոկրատները) այս և նախորդ նիստերի ընթացքում փորձում էին խափանել առաջարկած բանաձևի ընդունումը՝ մնալով ձեռնպահ։

իրադարձություններն ադրբեջանական այլ քաղաքներում (Կիրովաբադ, Բաքու և այլն) ու բնակավայրերում շեշտակի համոզում են մեզ, որ այն ուժերը, որոնք 1915 թ. ճակատագրական էին հայերի համար, դեռ կենդանի են։

Այդ իսկ պատճառով մարդու իրավունքների միջազգային կազմակերպությունների ամենաանհետաձգելի խնդիրը հայերի նկատմամբ բռնությունների կանխումը պետք է լինի։ Եվ մենք հույս ունենք, որ ոչ պետական և մարդու իրավապաշտպան կազմակերպությունների հաջորդ նստաշրջանը Մոսկվայում հնարավորություն կտա արտահայտվելու ազգային փոքրամասնությունների պաշտպանության ու ինքնորոշման մասին Ադրբեջանում և ԼՂԻՄ-ում։

ГЕНОЦИД АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА

ТЕССА ХОФМАНН (Западный Берлин)

Резюме

Геноцид армян—это явление не исторически изолированное, а относящееся к международному содружеству вообще. Необходимым дополнением к историческому исследованию этого преступления против человечества является сфера прав человека, защиты выживших и их потомков от преследований и обеспечение личных прав. Растущая активность правозащитных организаций (в Великобритании, Франции, немецкоязычных странах и др.) начала влиять на международное общественное мнение в пользу армян. Дальнейшие проявления геноцида армян в 1988—1990 гг. (Сумгаит, Кировабад, Баку и т. д.) свидетельствуют, что безотлагательной задачей международных правозащитных организаций должно являться пресечение насилия в отношении армян.

THE GENOCIDE OF ARMENIANS IN OTTOMAN EMPIRE FROM THE POINT OF VIEW OF MAN'S RIGHT

TESSA HOFFMAN (West Berlin)

The genocide of Armenians is a phenomenon not historically isolated, but concerning international concord generally. The sphere of man's right. the protection of survivers and their posterities from persecution and security of individual rights are necessary supplements to the historical research of this crime against mankind.

The increasing activity of right protection organizations (in Great Britain, France, German speaking countries, etc.) began to influence on the international social opinion in Armenians' favour.

Further manifestations of Armenians' genocide in 1988—1990 (Sumgait, Kirovabad, Baku, etc.) testify, that putting an end to the violence concerning Armenians must be the urgent problem of right protection international organizations.